ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հրապարակում է Հայաստանում նախագահական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցը

ՎԱՐՇԱՎԱ, 30 մայիսի 2008 թ. -- Հայաստանում նախագահական ընտրությունների նախընտրական և քվեարկության փուլերը ընթացել են հիմնականում ԵԱՀԿ պարտավորություններին համապատասխան, սակայն խնդիրներ են ծագել՝ հիմնականում քվեարկությունից հետո՝ նշվում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի /ԺՀՄԻԳ/ կողմից՝ փետրվարյան ընտրությունների վերաբերյալ այսօր հրապարակված վերջնական զեկույցում:

«Թեև 2008թ. նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել էին ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին նախընտրական և քվեարկության շրջանում՝ լուրջ մարտահրավերներ ի հայտ եկան որոշ պարտավորությունների առնչությամբ ՝ մասնավորապես ընտրության օրվանից հետո», - նշված է զեկույցում:

«Այն ցուցաբերեց անբավարար հարգանք ժողովրդավարական ընտրությունների հետ կապված հիմնական չափանիշների նկատմամբ և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը: Հատկապես ձայների հաշվարկի գործընթացում ի հայտ եկան թափանցիկության և հաշվետվության թերություններ, իսկ բողոքարկման գործընթացները լիարժեք արդյունավետ չէին:

ԺՀՄԻԳ-ը փետրվարյան ընտրությունների մոնիտորինգը իրականացրեց 44 երկարաժամկետ և 250 կարճաժամկետ դիտորդների մասնակցությամբ՝ շուրջ 40 ԵԱՀԿ մասնակից պետություններից: Զեկույցը գնահատում է ընտրական գործընթացները ԵԱՀԿ պարտավորությունների, այլ միջազգային չափանիշների և ազգային օրենսդրության համապատասխանության տեսանկյունից:

«Հայաստանում առկա են հիմնավոր իրավական հիմքեր՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար. մեր զեկույցում առանձնացված թերությունները ծագում են առկա օրենքների և կանոնների արդյունավետ և անկողմնակալ գործադրման վճռականության պակասի արդյունքում», - նշեց ԺՀՄԻԳ-ի տնօրեն Քրիսթիան Շթրոհալը:

«Հայաստանի ընտրական համակարգը պահանջում է ոչ այնքան հետագա տեխնիկական կամ իրավական բարեփոխումներ, որքան իրական հանձնառություն իշխանությունների կողմից՝ բոլոր մակարդակներով, ինչպես նաև այլ քաղաքական դերակատարների, ժողովրդավարական ընտրական գործընթացների՝ անհարկի պետական միջամտությունից զերծ և ԵԱՀԿ չափանիշներին համապատասխան»:

Զեկույցը ներկայացնում է կոնկրետ առաջարկություններ Հայաստանում ընտրական համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ ներառյալ ընտրական գործընթացներում հասարակական վստահության պակասի հետ կապված միջոցառումներ, բոլոր քաղաքացիների համար ապահովելու ուժի գործադրումից և ահաբեկումից զերծ քվեարկության, և հաստատելու հստակ սահմանազատում պետական կառույցների և իշխող քաղաքական կուսակցության միջև: